## Արձանագրություն 5

### «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«18» մարտի 2021թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
**Նախագահ՝**
Պետրոս Մանուկյան
**Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ**
Աննա Մարտիրոսյան
Մարի Ստեփանյան
**Քարտուղար՝**
Երանուհի Սարգսյան

**<u>Օրակարգ</u>**

1. ***<u>Ընթացակարգի վերաբերյալ</u>***

**1.1** «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար թվային ռենտգեն սարքավորման ձեռքբերման նպատակով էլեկտրոնային եղանակով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի փետրվարի 24-ի թիվ 4 որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել Արթուր Չիլինգարյան Ա/Ձ-ն, որին սույն թվականի մարտի 2-ին, էլեկտրոնային եղանակով, պատվիրատուն ծանուցել է ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

**1.2** Արթուր Չիլինգարյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի նախագիծը:

2. ***<u>Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.</u>***

**2.1** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը, նախաձեռնել գործընթաց՝ Արթուր Չիլինգարյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի բ/ ենթակետի:

**2.2** «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը:

**2.3** «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Պ. Մանուկյան

հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մարտիրոսյան

Մ. Ստեփանյան

Գնումները համակարգող՝ Ե. Սարգսյան